



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 02 » մարտի 2015 թ.

N 12

ք. Ստեփանակերտ

ԼՂՀ Գլխավոր դատախազի առ 19.03.2010 թ. թիվ 05 «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար փակ և բաց մրցույթների անցկացման և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայողների գործունեության գնահատման հանձնաժողով ստեղծելու մասին» հրամանում փոփոխություն կատարելու մասին

Ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 11-րդ կետերով, «Իավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 71 հոդվածի համաձայն՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար փակ և բաց մրցույթների անցկացման և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայողների գործունեության գնահատման հանձնաժողովի նախագահ նշանակել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության 3-րդ դասի պետական խորհրդական Սերգեյ Յուրիի Ստեփանյանին :

2. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին, ԼՂՀ քաղրջդատախազներին և ԼՂՀ դատախազության աշխատակազմի ղեկավարին:

3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական**

Ա.Ա.Մոսիյան